

Բ Ն Ա Կ Ա Ն Ե Ս է Խ Ա Վ Ա Յ Յ Բ Բ

Վանից արեելք, մոտավորապես վեցժամյա հետիւան ճանապարհ է մինչև Արճակի լիճը, որին տեղացիները Առնակու ծավ էին անվանուա, իսկ տեղական թուրքերը՝ էրչեք գանըդ (Արճակի ծով):

Լճի արեմայան ափին, պատի նման կանգնած է Կըզըլզա կոշվող լերկ ու մշտամոտլլ լեռը, արևելքից ու Հյուսիսից՝ ընգարձակ, հարթ, կանաչ մարգագետիններ են: Լիճն օղակված էր արեելքից՝ Արճակ ու Խառակոնիս, իսկ արևմուտքից՝ Կըզըլզա ու Մշկոններ հինավորց հայկական գյուղերով: Լիճն ընկած է լայնանիստ մի հովտի եղրին, իսկ վեցինս էլ օղակված է Հյուսիսից՝ Հասփատանա սար ու Աղթագաղ լեռներով, հարավից՝ էրկըթներ (Կամ Առճակու սար), Գնձան սար և Աղտաշա սար լեռնագագաթներով:

Աշխարհագրական այս դիրքի շնորհիվ էր, թերեւ, որ ժողովուրդը հնուց ի վեր ասում էր. «Առճակ՝ մատընկի ակա» Արճակի լիճն անվերջ փոփոխում էր իր րոնած տարածքը և ընդլայնվում ի հաշիվ Հյուսիսարելլան հարթ մարգագետինների: Մեծ եղեռնին նախորդող տարիններին լիճը երեսունյոթ վերսակց ավելի շրջագիծ ուներ:

Լիճն են թափվում արևելքից՝ Խառակոնսա կետը, որին տեղացիք են կեա էին անվանուա և Պատիկ կամ Առնակու կեար, իսկ հարավից՝ Խնոյանու և Մալավու ենու սակավաջուր գետակներու, Վերշին երերն ամունը վերածվում էին բարալիկ առուների:

Արճակի լճի ջուրը դառնալիք է՝ մեծ քանակությամբ բորակ (պարակ) է պարունակում, ունի մաքրող ու բուժիչ հատկություն: Գավառի բնակչությունը լճափից բորակ էր հավաքում, որպեսզի ձմունը լողացներ անասուններին, ինչպես նաև օգտագործեր հտգուատ լվանալիս և օճառ եփելիս:

Բորակ հավաքելը կատարվում էր հետեւալ

կերպու Աշնան ամիսներին, մայրամուտին, գնում էին լճափ (օրվա այդ պահելին սկսվում էր տեղատթությունը), քամին արագործն չորացնում էր տղմուտ ափը և աղանման նստվածք առաջացնում, Ավլում էին այդ աղանման նստվածքը և տուն բերում: Մեկ օր այն փոստ էին արեկի աակ, ապա կըագույն դարձած փոշին լցնում ծածկի անկյունը ու ամրող տարին օգտագործում:

Արճակի լճում ոչ մի աեսակ ձուկ չկար, լին թափվող գետակներում և կամ լճափնյա մարգագետիններում ծղծացող բազմաթիվ աղրրակներից մեկն ու մեկում հազվագեց նկատվում էր տառեխ:

Շրջակա անասնապահները տարին մեկ կամ երկու անդամ իրենց անասունները բերում էին լճափ, «շորի» (աղի), այն հավատով, որ «ծովային» օդը շնչելով, անասունները զերծ են մնալու դարադ հիվանդությունից, թեև մշաական այդ «ծովային» օքը շնչող և նրա մարգագետիններում արածող Արճակի և Խառակոնիսի անասունները երբեք էլ զերծ շէին հիվանդություններից:

Ամունը դաշտերում ու ըլուրներում գալերի երեալը հազվագեց չէր. գրանք օրը ցերեկով ուղարներ էին խլում հոտից: Հայերը հրազեն պահելու իրավունք չունեին, և գալերն աներկյուղ դիմում էին որսի Աղվես ու նապաստակ էլ ջատ կացին:

Լսոներում բանշարի զնացած կանայք և ցախավելացու բերող տղամարդիկ հիացքով էին պատմում իրենց տեսած եղնիկների ու եղջերուների մասին: Կային նաև արշեր:

Արճակի լճափնյա ճլճուտներն ու եղեգնուտները, մանավանդ Հյուսիս-արևմայան եղրի, մարդու հասակի կրկնակի բարձրություն ունեցող, խիտ ճիլերով օղակված ճիլ զյոլ կոշված հսկայական ճահճուար ամունը անվտանգ ապաստարան էին շվող շրային թոշունների համար: Ամրող

ամասը, լճի երեսին լողում էին անհամար սագեր, բաղեր, նայեր, կիվիվներ, ձկնկուներ և այլ թռչուններ:

Գարունը գեռ լրիվ շրացված, բարձր բարդիների կատարներին և զյուղական մի բանի հին ամրոցների (աթարի կոնաձեկ կառուցվածք՝ մեջը ցտն լցնելու համար) գլխներին գրած իրենց ըները նորսգելու էին դալիս գարնան առաջին ավեաւրեներ՝ արագիները և շրջապատը լցնում իրենց կտուցների կափկափումներով։ Արտերում թռչունը էին հարուստ էին սերմնաղոավները, սարյակները, արտույաներն ու գեղնափորիկները, քարերի արանքներում ոստոստում էին լորերն ու կաքավները, ամենուրեք իրենց պայծառ ու երգներանդ փետուրներով փայլիլում էին ներկարարներն ու մեղվագեղները, ծառաստաններում տարածվում էր հո-

պոպների կանչը, սրաների ու խորթանոցների պաւերին իրենց կավաջեն ընիկներն էին ծեփում շինականների սիրելի ծիծեռնակները, օգում եռանկունի կաղմած, կոկողներով իրենց վերադարձն էին ավետում կուռնկները, Գյաղնայի իւուրունկ ու երկար կիրճի ժայռակույաւերում րույն էին գնում զառնուկների մեծության, անձեռնիմելի սրբություն ձանաշված ծանրաթոիլ արուները, բարկերի վրայով սավառնում էին հավի ճակարին սիրահար ուրուրները։

Թռչունների բաղմաղանությունը ամուանն էր Զմռանը մնում էին ագռավները, ճնճղուկներն ու կաթավները։ Զմռանը որս անելը մեղք չէր համարվում։ Անասնակերի գնացող շինականները կողովներ էին շպրտում քուզուզ անող կաքավների վրա և րոնում։

ԱՐՃԱԿԻ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐՆ ՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արճակն առաջներում եղել է զուտ հայկական կավառ՝ երեսունից ավելի դյուղերով։

Վերջին շրջանում հայկական էր մնացել միայն վեց զյուղ։

1. Արճակ (զավառի կենտրոն), բաղկացած 60 տնից։

2. Խառակիսիս (Արճակին ամենամոտիկ գյուղը), բաղկացած 200 տնից։

3. Կըզըլջա (լճի հակադիր ափին), 55 տուն։

4. Մյսկըներ (նույն ափին), 60 տուն, հայտնի էր կաավատի մշակումով և ձիթավաճառությամբ։

5. Նարաք՝ 20 տուն։

6. Պախեզիկ՝ 16 տուն։

Այնուհեա գալիս էին այլ ընակշություն ունեցող, երրեմն հայախառն դյուղեր։

7. Գյեղալավա, ուր կեսից ավելին հայեր էին, մյուսները՝ ասորի։ Ընկած էր Վանդ տանող ճանապարհին, Գյեղալավայի բաղմաղրյուր մարգագեաինը ուղևարների հանդսուավայր էր։ Եթե մի ընտանիքի մասին խոսք լիներ, թե նրանց աանը բաղմապիսի երթեեկներ են լինում, ասում էին՝ «Գյեղալավու շիման ի, մեյն կըլնի, տասն կիձնի»։

8. Խնո, զուտ ասորական հին դյուղ, ուներ իր հողերը հովիվը՝ կաշա (քահանա), որը 1915 թ. եղեռնի օրերին քաշարար մարտնչում էր Արճակից Վան փախչող ինքնապաշտպան հայերի շարքերում։

9. Աղաւազ, քրդական դյուղ, Արճակից բաժանվում էր մի բարձր բլրով։ Ստ նախկինում եղել էր զուտ հայկական դյուղ։ XVIII դարավերջին այնտեղ աեղավորվել էր ո՞ր քանի տում քուրդ։

Եկվորները հետղետե աճելով, սկսել էին ճնշել հայերին այնքան խստորեն, որ վերջիններս ցրվել էին։

10. Մալավա, աա դուցե դավառի ամենից շուտ հիմնադրված քրդական դյուղը լիներ։ Գյուղացիք պատկանում էին ոչ համիդիկ աշիրաթների ցեղախմբերին և զրաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ։

11. Քրդվան, հիմնադրվել էր նախկինում Արճակին պատկանող հողամասում, հետղետե ընդլայնել իր տարածությունները և առաջացել մինչև ս. Սարդիս կոչված բլրուն ու կանդ առել, տիրելով բլրի արեելան մասին, Բնակիչները համիդիկ չէին, դրաղվում էին հողագործությամբ ու խաշնարածությամբ։ Արճակ դյուղը առավելապես Քրդվան դյուղի քրդերից էր վարձում դյուղի նորադարին (պահապան)։

Քրդվանցիներն առանձնակի հարդանք ունեին արճակցի հայերի հանդեպ, որովհետե արճակցիր հյուսներ էին ու նրանց համար սայլ ու դութան էին շինում կամ նորոգում։ Խոկ քրդերն արհեստը բարձր զնահաառող ժողովուրդ են։

12. Վերին և Ներքին Մագրա, հիմնվել էին 1850—55 թվականներին։ Փոքրիկ դյուղեր էին ու պատկանում էին երկու քուրդ բեյերի։

13. Ռամմին, փոքրիկ քրդական դյուղ էր, համեմաարար հին, բնակչությունը դրաղվում էր ոչխարապահությամբ, հողագործությամբ և մանր ավաղակությամբ։